ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Մ.Փաշայանի ք.Թբիլիսի (Վրաստան) կատարած պաշտոնական գործուղման

1. **Անուն, ազգանուն**

   Միքայել Փաշայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   ք.Թբիլիսի, 2018թ. հուլիսի 17-ից 18-ը

4. **Հրավիրող կողմը**

   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)

   Հարկման նպատակներով թափանցիկության և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորում

   Վրաստանի խորհրդարան, ազգային բանկ, ֆինանսների նախարարություն, եկամուտների ծառայություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   Մասնակցություն տարածաշրջանային բարձրաստիճան միջոցառմանը, որը նվիրված է ընթացիկ միջազգային հարկային խնդիրներին, մասնավորապես՝ տարածաշրջանի երկրներում «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» (BEPS) ծրագրի և հարկային թափանցիկության բարձրացմանն ուղղված միջոցառումների ներդրմանը

6. **Քննարկված թեմաները՝**

   Հանդիպումը նպատակ ուներ նպաստել մասնակից երկրներում տարբեր շահագրգիռ գերատեսչությունների կողմից միջազգային հարկման առաջնահերթությունների համապարփակ ընկալմանը, դյուրացնել ներքին հարկային եկամուտների մոբիլիզացմանն ուղղված գործողությունների ընտրությունը և ընդհանուր առմամբ բարելավել հարկային համակարգերի արդյունավետությունը մասնակից երկրներում: Հանդիպմանը մասնակցել են տարածաշրջանի երկրների հարկային մարմինների, ֆինանսների նախարարությունների, ազգային բանկերի, խորհրդարանների ղեկավարության և հարկային հարցերով զբաղվող

խորհրդարանական հանձնաժողովների բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաև մասնագիտացված միջազգային կազմակերպությունների պատվիրակներ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են BEPS-ի իրագործման գերակայությունները և հարկային նպատակներով տեղեկատվության փոխանակման համընդհանուր ստանդարտները: Մասնավորապես՝ BEPS-ի նվազագույն չորս ստանդարտները (վնասակիր հարկային պրակտիկան, պայմանագրերի չարաշահումը, երկիր առ երկիր հաշվետվողականությունը և վեճերի լուծումը), BEPS-ի կանխարգելման ուղղված միջազգային հարկային պայմանագրերին կիրառմանն առընչվող բազմակողմանի կոնվենցիան, ինչպես նաև հարցումների հիման վրա հարկային տեղեկատվության փոխանակման (EOIR) և ավտոմատացված տեղեկատվության փոխանակման (AEOI) գլոբալ ստանդարտները, վերջիններիս կիրառումից առավելագույն օգուտ ստացնալու համար ցուցաբերվող օժանդակությունը:

Քննարկված թեմաներն են՝

1) Միջազգային հարկային համագործակցության զարգացումները

- Հարկերից խուսափելու դեմ պայքարը՝ որպես հարկային եկամուտների և ֆինանսական զարգացման մոբիլիզացման գործիք,
- Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ներկայիս ներգրավվածությունը համաշխարհային հարկային համագործակցությունում և տարածաշրջանային հնարավոր սիներգիաները.

2) Հարկվող բազայի խեղաթյուրումը և շահույթի տեղաշարժը (արտահանումը) (BEPS)

- BEPS վերաբերյալ համապարփակ իրավական հիմքերի (Inclusive Framework on BEPS) վերջին զարգացումները,
- BEPS-ի արտացոլումը ներքին օրենսդրությունում. օրենսդրական փոփոխությունների ընթացքը, այդ թվում՝ տարածաշրջանի երկրների առջև ծառացող կոնկրետ մարտահրավերները.

3) Հարկային թափանցիկության ապահովումը և տեղեկատվության փոխանակման ընդլայնումը

- Հարկային թափանցիկության և հարկային նպատակներով տեղեկատվության փոխանակման միջազգայնորեն ճանաչված ստանդարտների ներդրման ընթացքը, ներառյալ՝ հարցումների հիման վրա տեղեկատվության փոխանակումը (EOIR) և դրամական հաշիվների մասին տեղեկատվության ավտոմատ փոխանակումը (AEOI): Հարկային հարցերում փոխադարձ վարչական աջակցության բազմակողմ կոնվենցիայի կարևորությունը.
- Հարկային տեղեկատվության թափանցիկության ստանդարտների ներառումը ներքին օրենսդրությունում՝ բանկային գաղտնիքը և բանկային տեղեկատվության մատչելիության խնդիրները, փաստացի սեփականատերերի մասին տեղեկությունների առկայությունը և AEOI ստանդարտի կիրառումը.

4) Հեռանկարները

- Կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում առաջնահերթությունների որոշումը և գործողությունների մեկնարկումը.
- Քաղաքական ղեկավարության դիրքորոշման, ինչպես նաև հարկերից խուսափման դեպքերի բացահայտմանն ուղղված տարբեր շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ փոխգործակցության կարևորությունը.
- BEPS-ի միջոցառումների իրականացման և հարկային թափանցիկության չափանիշների կիրառման գործում ՏՀԶԿ-ի կողմից առաջարկվող աջակցությունը զարգացող երկրներին, այդ թվում՝ BEPS-ի համապարփակ իրավական հիմքերի (Inclusive Framework on BEPS) և Հարկման թափանցիկության և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումի միջոցով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի պատվիրակությունում ընգրկված էին ՀՀ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խ.Հարությունյանը և ՀՀ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը:

Հանդիպման ընթացքում կայացել են երկկողմանի հանդիպումներ օտարերկրյա հարկային մարմինների և միջազգային կազմակերպությունների պատվիրակությունների ղեկավարների հետ, այդ թվում՝

- OECD-ի Հարկման թափանցիկության և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումի ղեկավարի տեղակալ Դ.Գոդֆրեյի,
- Բելարուսի Հանրապետության եկամուտների և գանձումների նախարար Ս.Նալիվայկոյի,
- Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավար Գ.Տաբուաշվիլիի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

1. Միջազգային հարկային համագործակցության արդի միտումներին համապատասխանելու նպատակով առաջարկում եմ հնարավորինս արագացնել Հայաստանի Հանրապետության անդամակցության գործընթացը ՏՀԶԿ BEPS ծրագրին.

2. ՏՀԶԿ Գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքները բարձր մակարդակով իրականացնելու նպատակով առաջարկում եմ ծրագրավորել իրականացվելիք աշխատանքները՝ ապահովելով շահագրգիռ գերատեսչությունների միջև անելիքների հստակ տարանջատումը և հանրային քննարկումների կազմակերպումը.

3. Առաջարկում եմ վերապատրաստումների և հատուկ դասընթացների միջոցով կատարելագործել համապատասխան գերատեսչությունների՝ միջազգային հարկային համագործակցության ոլորտում ներգրավված անձանց մասնագիտական գիտելիքները և կարողությունները, որը կարող է իրականացվել նաև միջազգային դոնոր կազմակերպություններից լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավվելու միջոցով:

9. Գործուղվող

Միքայել Փաշայան

10. Ստորագրություն, ամսաթիվ

19 հուլիսի 2018թ.